ՃԱՆԱՉԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՑԸ...

Արդյոք մեր հույսը մե՞զ վրա է, թե՞ փափագում ենք Նրա Հոգուն

Ելից 33:7-11 — 7 Մովսեսը վերցրեց վրանը և այն կանգնեցրեց բանակատեղիից դուրս՝
բանակատեղիից հեռու, և այն կոչեց ժողովի վրան։ Ամեն ոք, ով փնտրում էր Տիրոջը,
գնում էր դեպի ժողովի վրանը, որը բանակատեղիից դուրս էր գտնվում։ 8 Երբ
Մովսեսը դեպի վրանն էր գնում, ամբողջ ժողովուրդը վեր էր կենում, և ամեն մեկը, իր
վրանի մուտքին կանգնած, նայում էր Մովսեսի ետևից, մինչև որ նա մտնում էր վրանը։
9 Հենց որ Մովսեսը վրան էր մտնում, ամպի սյունն իջնում ու կանգնում էր վրանի
մուտքի մոտ, և Տերը խոսում էր Մովսեսի հետ։ 10 Ամբողջ ժողովուրդը տեսնում էր
ամպի սյունը վրանի դռան մոտ կանգնած. և ամբողջ ժողովուրդը վեր էր կենում, ու
ամեն մեկը երկրպագություն էր անում իր վրանի դռան մոտ։ 11 Տերը Մովսեսի հետ
խոսում էր դեմառդեմ, ինչպես մի մարդ կխոսեր իր բարեկամի հետ։ Ապա Մովսեսը
վերադառնում էր բանակատեղի, բայց նրա ծառան՝ Նավեի որդի պատանի Հեսուն,
վրանից դուրս չէր գալիս։

18 Մովսեսն ասաց. «Աղաչում եմ, ցո՛ւյց տուր ինձ քո փառքը»։

Չորս պատճառ, թե ինչու մենք պետք է փափագենք Նրա Հոգուն...

- Մենք ունենք <u>հանձնարարություն</u>, որը չենք կարող կատարել:
- Մենք ունենք <u>արտոնություն</u>, որը չենք կարող անտեսել:
- Մենք ունենք <u>ընտանիք</u>, որը չենք կարող մոռանալ:
- Մենք ունենք <u>Աստված</u>, Ում չենք կարող ըմբռնել:

Չորս աղոթք այս երեկոյի համար...

«Երբ Աստված Իր եկեղեցու համար մեծ բան է ցանկանում անել, Նրա կամքն է, որ դրան նախորդեն Իր ժողովրդի բացառիկ աղոթքները»:
Ջոնաթան Էդվարդս

- Թո՛ղ Աստծո <u>ներկայությունը</u> գա:
- Թո՛ղ Աստծո <u>Խոսքով</u> լցվի տունը:
    - Թո՛ղ որ մենք <u>ստանանք</u> Նրա Խոսքը:
    - Թո՛ղ որ մենք <u>վերարտադրենք</u> Նրա Խոսքը:
- Թո՛ղ Աստծո <u>սրբությունը</u> դրսևորվի:
- Թո՛ղ որ Աստծո <u>մարդիկ</u> կյանք առնեն:

Մեր ուսումնասիրության չորս կողմերը...

- Սուրբ Հոգին. առեղծված և պատմություն
- Սուրբ Հոգի Անձը
    - Ով է Նա
- Սուրբ Հոգու աշխատանքը
    - Ինչ է Նա անում
- Սուրբ Հոգին. կարևոր հարցեր
    - Հայհոյություն Սուրբ Հոգու դեմ
    - Մկրտված Սուրբ Հոգով
    - Լցված Սուրբ Հոգով
    - Պարգևներ Սուրբ Հոգուց
        - Մարգարեություն
        - Լեզուներ
        - Բժշկություն

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ ԱՆՁԸ. ՈՎ Է ՆԱ

«ՀՈԳԻ» բառի կիրառությունը Սուրբ Գրքում...

- Բնական. «քամի»
- Հրեշտակային. «չար հոգի»
- Մարդկային կյանք. «շունչ» կամ «հոգի»
- Մարդկային վերաբերմունք. «սիրո հոգի»
- Աստվածային. «Աստծո Հոգի» կամ «Սուրբ Հոգի»
    - Երբեմն՝ որպես Աստծուն բնութագրող հատկանիշ՝ «Աստված հոգի է»:

Սուրբ Հոգու Անհատականությունը...

- Հոգին զորություն չէ:

«Եվ Հիսուսը Հոգու զորությամբ ետ դարձավ Գալիլեա, և Նրա համբավը դուրս գնաց այն գավառի ամեն կողմերում»:
(Ղուկաս 4.14)

«Դուք ինքներդ գիտեք այն բանը, որ եղավ բոլոր Հրեաստանում Գալիլեայից սկսած այն մկրտությունից հետո, որ Հովհաննեսը քարոզեց: Այն Հիսուսին, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությամբ օծեց, որ ման եկավ բարի անելով և սատանայից բոլոր հարստահարվածներին բժշկելով, որովհետև Աստված Նրա հետ էր»:
(Գործք 10.37-38)

- Հոգին զգացում չէ:

«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ամեն բան կսովորեցնի ձեզ և կհիշեցնի ձեզ ամեն ինչ, որ ձեզ ասացի»:
(Հովհաննես 14.26)

- Հոգին Անձնավորություն է:

«Սրանք երբ որ Տիրոջը պաշտոն էին մատուցում և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. «Ինձ համար որոշե՛ք Բառնաբասին և Սողոսին այն գործի համար, որ Ես դրանց կանչել եմ»»:
(Գործք 13.2)

    - Նա ունի անձնային հատկանիշներ:
      Բանականություն...

«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ամեն բան կսովորեցնի ձեզ և կհիշեցնի ձեզ ամեն ինչ, որ ձեզ ասացի»:
(Հովհաննես 14.26)

Կամք...

«Բայց այս ամենը հենց միևնույն Հոգին է ներգործում՝ ամեն մեկին բաժանելով ինչպես կամենում է»:
(Ա Կորնթացիս 12.11)

Հույզեր...

«Եվ մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգուն, Որով կնքվեցիք փրկության օրվա համար»:
(Եփեսացիս 4.30)

- Նա ունի անձնային <u>հույզեր</u>:

Նրան կարող են ստել...

«Եվ Պետրոսն ասաց. «Անա՛նիա, ինչի՞ համար սատանան քո սիրտը լցրեց, որ դու սուտ խոսես Սուրբ Հոգուն և ազարակի գնից թաքցնես: Չէ՞ որ նա, որ կենում էր, քոնն էր և ծախված էլ քո իշխանության տակ էր, ի՞նչ է, որ այս բանը դրեցիր քո սրտի մեջ. ոչ թե մարդկանց սուտ խոսեցիր, այլ Աստծուն»»:
(Գործք 5.3-4)

Նրան կարող են տրտմեցնել...

«Բայց նրանք ապստամբեցին և բարկացրին Նրա Սուրբ Հոգին, նա էլ նրանց թշնամի դարձավ, և ինքը պատերազմեց նրանց հետ»:
(Եսայիա 63.10)

Նրան կարող են հանգցնել...

«Հոգին մի՛ հանգցրեք»:
(Ա Թեսաղոնիկեցիս 5.19)

Նրան կարող են հակառակվել...

«Խստապարանոցներ և սրտերով և ականջներով չթլփատվածներ, դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակվում եք, ինչպես ձեր հայրերը, այնպես էլ դուք»:
(Գործք 7.51)

Նրան կարող են հայհոյել...

«Սրա համար ասում եմ ձեզ. ամեն մեղք և հայհոյանք կթողվի մարդկանց, բայց Հոգու դեմ հայհոյանքը չի թողվի մարդկանց»:
(Մատթեոս 12.31)

- Նա ունի անձնական ծառայություն:

Նա առաջնորդում է մեզ...

«Որովհետև որոնք որ Աստծո Հոգով են վարվում, նրանք Աստծո որդիներ են»:
(Հռոմեացիս 8.14)

Նա վկայություն է տալիս մեզ...

«Նույն Ինքը Հոգին վկայություն է տալիս մեր հոգու հետ, որ մենք Աստծո որդիներ ենք»:
(Հռոմեացիս 8.16)

Նա օգնում է մեզ...

«Այսպես էլ Հոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև թե ինչ բանի համար պիտի աղոթք անենք, ինչպես արժան է, չգիտենք, բայց Ինքը Հոգին անբարբառ հառաչանքով բարեխոս է լինում»:
(Հռոմեացիս 8.26)

Սուրբ Հոգու Աստվածությունը...

«Եթե Սուրբ Հոգին լիակատար Աստված չլիներ, ապա սա լուրջ հետևանքներ կունենար մեր փրկության վրա: Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ Սուրբ Հոգին վերստին ծնունդ է տալիս հավատացյալներին, բնակվում է նրանց ներսում և լցնում նրանց. ուստի եթե Սուրբ Հոգին ստորադասվում է Աստծուն կամ Աստված չէ, ապա ինչպե՞ս կարող ենք համոզված լինել, որ Նա այդ ամենը կարող է անել: Ավելին՝ եթե Նա Հորը և Որդուն հավասար չլինի Իր էությամբ և նպատակով, ապա ի՞նչն է երաշխավորում, որ եթե անգամ Նա փորձի անել այդ բաները, Հայրը և Որդին Նրա գործողությունները ճիշտ կհամարեն»:
Ջոն Ֆինբերգ

- Նա հավասար է Աստծուն:

- Ստել Հոգուն նշանակում է ստել Աստծուն:

«Եվ Պետրոսն ասաց. «Անա՛նիա, ինչի՞համար սատանան քո սիրտը լցրեց, որ դու սուտ խոսես Սուրբ Հոգուն և ագարակի գնից թաքցնես: Չէ՞որ նա, որ կենում էր, քոնն էր և ծախված էլ քո իշխանության տակ էր, ի՞նչ է, որ այս բանը դրեցիր քո սրտի մեջ. ոչ թե մարդկանց սուտ խոսեցիր, այլ Աստծուն»:
(Գործք 5.3-4)

- Աստծո տաճարը Հոգու տաճարն է:

«Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճար եք, և Աստծոյ Հոգին բնակված է ձեզանում»:
(Ա Կորնթացիս 3.16)

- Նա <u>նույնացվում է</u> Աստծո հետ:

«Ուրեմն գնացե՛ք, բոլոր ազգերը աշակերտե՛ք՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ, որ ձեզ պատվիրեցի, պահեն: Եվ ահա Ես ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհի վերջը»:
(Մատթեոս 28.19-20)

«Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, և Աստծո սերը, և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեր ամենի հետ. Ամեն»:
(Բ Կորնթացիս 13.13)

- Նա կապված է Աստծո հետ:

«Եվ այն տեղի անունը Մասսա և Մերիբա դրեց, Իսրայելի որդիների այնտեղ վիճելու և Եհովային փորձելու համար, որ ասացին. «Արդյոք Եհովան մեր մե՞ջ է, թե՞ ոչ»»:
(Ելից 17.7)

«Նրա համար, ինչպես Սուրբ Հոգին ասում է. «Այսօր եթե Նրա ձայնը լսեք, մի՛ խստացրեք ձեր սրտերը ինչպես բարկանալու ժամանակում փորձության օրը անապատի մեջ, ուր որ ձեր հայրերը փորձեցին Ինձ, քննեցին Ինձ և տեսան Իմ գործերը քառասուն տարի»»:
(Եբրայեցիս 3.7-9)

«Եվ ես լսեցի Տիրոջ ձայնը, որ ասում էր. «Որի՞ն ուղարկեմ, և ո՞վ կգնա Մեզ համար»: Եվ ես ասացի. «Ահա ես, ինձ ուղարկիր»: Եվ Նա ասաց. «Գնա՛ և ասա՛ այս ժողովրդին՝ լսելով կլսեք, բայց չեք հասկանա, և տեսնելով կտեսնեք, բայց չեք իմանա»»:
(Եսայիա 6.8-9)

«Եվ ասաց. «Գնա՛ ժողովրդի մոտ և ասա՛՝ դուք լսելով կլսեք և չեք իմանա, և տեսնելով կտեսնեք և չեք տեսնի: Որովհետև այս ժողովրդի սիրտը թանձրացավ, և իրենց ականջներով ծանր լսեցին, և իրենց աչքերը խփեցին, որ միգուցե աչքով տեսնեն և ականջներով լսեն և սրտով իմանան և դարձի գան, և Ես բժշկեմ նրանց»:

(Գործք 28.26-27)

«Ահա օրեր են գալիս, ասում է Տերը, որ Իսրայելի տան հետ և Հուդայի տան հետ պիտի նոր ուխտ կապեմ: Ոչ թե այն ուխտի պես, որ Ես արեցի նրանց հայրերի հետ, այն օրը, որ Ես բռնեցի նրանց ձեռքից՝ Եգիպտոսի երկրից նրանց հանելու համար, որ Իմ այն ուխտը նրանք զանց արին, թեպետ Ես նրանց հետ ամուսնականապես կապվել էի, ասում է Տերը: Այլ այս է այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո, ասում է Տերը, Իմ օրենքը պիտի դնեմ նրանց ներսում և նրանց սրտի վրա պիտի գրեմ այն, և Ես պիտի լինեմ նրանց Աստված, և նրանք պիտի Ինձ համար ժողովուրդ լինեն: Եվ այլևս մեկ մարդ իր ընկերոջը և մեկ մարդ իր եղբորը չպիտի սովորեցնի՝ ասելով, թե՝ Ճանաչե՛ք Տիրոջը, որովհետև նրանք ամենքը պիտի ճանաչեն Ինձ, նրանց փոքրերից մինչև նրանց մեծերը, ասում է Տերը, որովհետև Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը և նրանց մեղքերը այլևս չպիտի հիշեմ»:

(Երեմիա 31.31-34)

«Բայց Սուրբ Հոգին էլ վկայում է մեզ, այն առաջուց ասելով, թե. «Սա է այն ուխտը, որ կդնեմ նրանց հետ այն օրերից հետո, ասում է Տերը, կտամ Իմ օրենքները նրանց սրտերի մեջ և նրանց խորհուրդների վրա կգրեմ նրանց»: Եվ ապա ասում է. «Նրանց մեղքերը և նրանց անօրինությունները էլ չեմ հիշի»»:

(Եբրայեցիս 10.15-17)

- Նա ունի Աստծո հատկանիշները:

  - Նա <u>ամենուրեք</u> է:

    «Ո՞ւր գնամ Քո Հոգուց և Քո երեսից ո՞ւր փախչեմ: Եթե վերանամ երկինքը, Դու այնտեղ ես, և եթե դժոխքը փաթաթվեմ, ահա Դու այնտեղ ես: Եթե արշալույսի թևերն առնեմ և ծովի վերջի ծայրերում բնակվեմ, այնտեղ էլ Քո ձեռքը կառաջնորդի ինձ, և Քո աջը կպահի ինձ»:

    (Սաղմոս 139.7-10)

  - Նա ամենագետ է:

«Որովհետև Հոգին ամեն բաները քննում է և Աստծո խորքն էլ: Որովհետև մարդկանցից ո՞վ գիտի մարդու բաները, եթե ոչ մարդու հոգին, որ նրանում է. այնպես էլ Աստծո բաները ոչ ոք չգիտի, եթե ոչ Աստծո Հոգին»:

(Ա Կորնթացիս 2.10-11)

- Նա ամենակարող է:

«Հրեշտակը պատասխանեց և ասաց նրան. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը քեզ վրա կհովանավորի, դրա համար և այն ծնված սուրբն էլ Աստծո Որդի կկոչվի»»:
(Ղուկաս 1.35)

- Նա հավիտենական է:

«Էլ որքա՞ն ավելի Քրիստոսի արյունը, որ հավիտենական հոգով Իր անձը անարատ պատարագ մատուցեց Աստծուն, ձեր խղճմտանքը կսրբի այն մեռած գործերից, որ կենդանի Աստծուն պաշտեք»:
(Եբրայեցիս 9.14)

- Նա Աստծո գործերն է կատարում:

  - Նա բաշխում է Աստծո պարգևները:

«Բայց ամեն մեկին տրված է Հոգու հայտնությունը օգտի համար: Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, և ուրիշին՝ գիտության խոսք՝ նույն Հոգու չափով: Մյուսին՝ հավատք նույն Հոգով, ուրիշին՝ բժշկության պարգևներ նույն Հոգով: Ուրիշին՝ զորությունների ներգործություններ, և ուրիշին՝ մարգարեություն, ուրիշին՝ հոգիների ընտրություն, ուրիշին՝ այլ և այլ լեզուներ, ուրիշին լեզուների թարգմանություններ»:
(Ա Կորնթացիս 12.7-10)

  - Նա բերում է Աստծո փրկությունը:

«Որովհետև մենք էլ էինք մի ժամանակ անմիտ, անհնազանդ, մոլորված, ցանկությունների և կերպ-կերպ անառակությունների ծառայողներ, վարվում էինք չարությունով և նախանձով, ատելի էինք և իրար ատող: Բայց երբ որ մեր Փրկիչ Աստծո քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց, ոչ թե արդարության գործերից, որ մենք արեցինք, այլ Իր ողորմության համեմատ փրկեց մեզ մյուս անգամ ծնվելու ավազանով և Սուրբ Հոգու նորոգությունով»:
(Տիտոս 3.3-5)

  - Նա շունչ է տալիս Աստծո Խոսքին:

«Ամեն Գիրք Աստվածաշունչ է և օգտակար, վարդապետության և հանդիմանության և ուղղելու և արդարության խրատելու համար»:
(Բ Տիմոթեոս 3.16)

- Ի՞նչ կասեք իսլամի մասին:

    - Իսլամը հերքում է Երրորդությունը:

«Գրքի ժողովուրդ (քրիստոնյաներ), մի՛ խախտեք ձեր կրոնի կանոնները: Ալլահի մասին միայն ճշմարտությո՛ւնը խոսեք: Մեսիան՝ Մարիամի որդի Հիսուսը, ավելին չէր, քան Ալլահի առաքյալը և Մարիամին տրված Նրա Խոսքը՝ Նրանից ուղարկված հոգի: Ուստի հավատացե՛ք Ալլահին ու Նրա առաքյալներին և մի՛ ասեք. «Երեքը»: ...Ալլահը մեկն է: Ալլահը չի կարող որդի ունենալ»:
Սուրա 4.171, 383-384

    - Իսլամը նսեմացնում է Հոգին:

«Մենք նրա [Մարիամի] մոտ ուղարկեցինք մեր ռուհը [Գաբրիել հրեշտակին], և Նա Նրա առջև կանգնեց մարդու կերպարանքով...»:
Սուրա 19.17-19

Սուրբ Հոգու խոնարհությունը…

- Հոգին հավասար է Հայր Աստծուն Իր էությամբ:
- Հոգին ենթակա է Նրան Իր <u>գործառույթով:</u>
    - Նա գործակցում է Հոր հետ:

«Եվ երկիրն անձև ու դատարկ էր, և խավար կար անդունդի վրա, և Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա»:
(Ծննդոց 1.2)

«Տիրոջ խոսքով երկինքը ստեղծվեց, և Նրա բերանի Հոգով՝ Նրա բոլոր զորքերը»:
(Սաղմոս 33.6)

    - Նա <u>մեծարում է</u> Որդուն:

«Տակավին շատ բան ունեմ ձեզ ասելու, բայց հիմա չեք կարող տանել: Բայց երբ որ Նա՝ ճշմարտության Հոգին, կգա, Նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ, որովհետև Իր անձից չի խոսի, այլ ինչ որ կլսի, կխոսի և գալու բաները կպատմի ձեզ: Նա Ինձ կփառավորի, որովհետև Իմից կառնի և կպատմի ձեզ»:
(Հովհաննես 16.12-14)

- Աստծո Խոսքում...

«Որ այն փրկության համար որոնեցին և քննեցին մարգարեները, որ մարգարեանում էին այն շնորհքի համար, որ լինելու էր ձեզանում:
Քննելով, թե որ և ինչպիսի ժամանակի համար էր գուշակում Քրիստոսի Հոգին, որ նրանցում էր, առաջուց վկայելով Քրիստոսի չարչարանքները և Նրանից հետո լինելու փառքը: Որոնց հայտնվեց, որ ոչ թե իրենց անձերին, այլ մեզ էին մատակարարում այն բաները, որ հիմա պատմվեցին ձեզ նրանց ձեռքով, որ ավետարանեցին ձեզ Սուրբ Հոգով, որ երկնքից ուղարկվեց, որի մեջ հրեշտակները ցանկանում են տեսնելով թափանցել»:
(Ա Պետրոս 1.10-12)

- Փրկության գործում...

«Բայց երբ որ Մխիթարիչը կգա, որ Ես Հորից կուղարկեմ ձեզ, ճշմարտության Հոգին, որ Հորից է դուրս գալիս, Նա կվկայի Ինձ համար»:
(Հովհաննես 15.26)

«Բայց մենք ամենքս, բաց երեսով Տիրոջ փառքը ինչպես հայելու մեջ տեսնելով, նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես թե Տիրոջ Հոգուց»:
(Բ Կորնթացիս 3.18)

Սուրբ Հոգու Հեղինակությունը…

- Նա հայտնում է Իր <u>ներկայությունը</u>:

«Եվ Եհովան իջավ մի ամպով և նրա հետ խոսեց և նրա վրա եղած հոգուց առավ և այն յոթանասուն ծերերի վրա դրեց: Եվ եղավ, հենց որ Հոգին նրանց վրա հանգչեց, մարգարեություն արեցին և չդադարեցին: Եվ երկու հոգի մնացել էին բանակի մեջ. մեկի անունը՝ Ելդադ, և մյուսի անունը՝ Մովդադ, և Հոգին հանգչեց նրանց վրա, և նրանք այն գրվողներից էին, բայց խորանը չէին եկել: Եվ բանակում մարգարեություն էին անում»:
(Թվոց 11.25-26)

«Եվ երբ որ Պենտեկոստեի օրերը լրացան, ամենքը միաբան մեկտեղ էին: Եվ հանկարծակի երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, ուր նստած էին: Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ ինչպես կրակից, և նստեց նրանց ամեն մեկի վրա: Եվ ամենքը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս»:
(Գործք 2.1-4)

- Նա հայտնում է Իր զորությունը:

«Աստված էլ միասին վկայեց նշաններով և հրաշքներով և կերպ-կերպ զորություններով և Սուրբ Հոգու պարգևներով, ինչպես Ինքը կամեցավ»:
(Եբրայեցիս 2.4)

«Եվ իմ խոսքը և քարոզությունը ոչ թե մարդկային իմաստության պատիր խոսքերով եղավ, այլ Հոգու և զորության ապացուցությամբ»:
(Ա Կորնթացիս 2.4)

«Որովհետև ես չեմ համարձակվի մի բան խոսել, որը Քրիստոս չգործեց ինձանով՝ հեթանոսներին հնազանդեցնելու համար՝ խոսքով և գործով: Նշանների և հրաշքների զորությունով, Աստծո Հոգու զորությունով, այնպես որ ես Երուսաղեմից սկսած պտույտ տալով մինչև լյուրիկացիների կողմերը Քրիստոսի ավետարանով լցրել եմ»:
(Հռոմեացիս 15.18-19)

- Նա հայտնում է Իր նպատակը:

«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ մինչև երկրի ծայրերը»:
(Գործք 1.8)

«Սրանք երբ որ Տիրոջը պաշտոն էին մատուցում և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. «Ինձ համար որոշե՛ք Բառնաբասին և Սողոսին այն գործի համար, որ Ես դրանց կանչել եմ»»:
(Գործք 13.2)